ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/95

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.03.2022թ. թիվ 26/26-1/4087-2022 գրությամբ «Արկինա» ՍՊ և «Մայ Վիլլիջ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին, «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 03.03.2022թ. թիվ 01/61-4945 գրության հիման վրա, 10.03.2022թ. թիվ 26/26-1/4087-2022 գրությամբ նախաձեռնել է «Արկինա» ՍՊ և «Մայ Վիլլիջ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին, «Ղահրաման» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արկինա» ՍՊ և «Մայ Վիլլիջ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի, «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արկինա» ՍՊ և «Մայ Վիլլիջ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի, «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արկինա» ՍՊ և «Մայ Վիլլիջ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը, «Ղահրաման» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/95 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 09:50-ին և 22.03.2022թ. թիվ 09:24-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.03.2022թ. թիվ 01/61-4945 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» և «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրերով գնման ընթացակարգեր:

Ընթացակարգերին մասնակցության հայտեր են ներկայացրել «Արկինա» ՍՊ և «Մայ Վիլլիջ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը, «Ղահրաման» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակիցներ):

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 44-րդ և 45-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Արկինա» ՍՊ և «Մայ Վիլլիջ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը, 6-րդ չափաբաժնի մասով՝ «Ղահրաման» ՍՊԸ-ն:

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 33-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանի և Մասնակիցների միջև կնքվել են համապատասխան գնման պայմանագրեր՝ առանց ֆինանսական միջոցների:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո Պայմանագրի 8.15 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով Մասնակիցներին ներկայացվել է համաձայնագրեր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել նշված փաստաթղթերը՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ Մասնակիցները խախտել են Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 8.15 կետի, Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանի լուծվել են կնքված պայմանագրերը:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջներով, առաջարկում եմ Մասնակիցների նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը

Կից Ձեզ են տրամադրվում համապատասխան փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/95 ընթացակարգի շրջանակներում 17.03.2022թ. ժամը 09:50-ին և 22.03.2022թ. թիվ 09:24-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/95 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/95 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Արկինա» ՍՊԸ-ի միջև 10.12.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-3» ծածկագրով գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

2. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-3» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդով մատակարարման պայմանագիր կնքելու նպատակով «Արկինա» ՍՊԸ-ի (Գործընկեր 1) և «Մայ Վիլլիջ» ՍՊԸ-ի (Գործընկեր 2) միջև 07.11.2021թ. կնքվել է համատեղ գործունեության (կոնսորցիումի) մասին պայմանագիր N 1, որի 2-րդ կետի 2.1-րդ ենթակետով սահմանվում է, որ սույն պայմանագրով իրականացվող գործունեության գործերը վարում է Գործընկեր

1-ը, հետևաբար «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի մասնակցության հայտը ներկայացվում է վերջինիս կողմից:

3. Երևանի քաղաքապետարանի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 10.12.2021թ. կնքվել են թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-6» և «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-8» ծածկագրերով գնման պայմանագրեր (հետայսու նաև՝ Պայմանագրեր):

4. Պայմանագրերի 8.15-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

5. Պատվիրատուի կողմից 03.02.2022թ. «Արկինա» ՍՊ և «Ղահրաման» ՍՊ ընկերությունների էլեկտրոնային փոստերին է ուղարկվել համաձայնագրերի նախագծերը և առաջարկվել վերջիններիս 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իրենց կողմից հաստատված համաձայնագրերը՝ պայմանագրերի ապահովումների և որակավորման ապահովումների հետ միասին:

6. «Արկինա» ՍՊԸ-ին և «Ղահրաման» ՍՊԸ-ին ուղղված Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին 01.03.2022թ. թիվ 01/61-4704, 01/61-4705 և 01/61-4706 համապատասխան ծանուցումներով Պատվիրատուն մասնավորապես հայտնել է, որ 10.12.2021թ. կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-3», «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-8» և «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-

22/2-6» ծածկագրով գնման պայմանագրերի շրջանակներում Ընկերությունների կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել իրենց կողմից հաստատված համաձայնագրերի բնօրինակները՝ կից փաստաթղթերով, և պայմանագրերի և որակավորման ապահովումները: Ինչպես նաև Պատվիրատուն նշել է, որ հիմք ընդունելով Պայմանագրերի 8.15 կետը՝ հրաժարվում է կնքված Պայմանագրերից համարելով դրանք լուծված:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 01.03.2022թ. հրապարակվել են Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.03.2022թ. թիվ 26/26-1/4087-2022 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 03.03.2022թ. թիվ 01/61-4945 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ ***եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով***: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: ***<u>Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն</u>***

<u>ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:</u>

Պայմանագրերի 8.15-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, ***Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: <u>Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:</u>***

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Արկինա» ՍՊԸ-ի միջև 10.12.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-3» ծածկագրով գնման պայմանագիր:

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-3» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդով մատակարարման պայմանագիր կնքելու նպատակով «Արկինա» ՍՊԸ-ի (Գործընկեր 1) և «Մայ Վիլլիջ» ՍՊԸ-ի (Գործընկեր 2) միջև 07.11.2021թ. կնքվել է համատեղ գործունեության (կոնսորցիումի) մասին պայմանագիր N 1, որի 2-րդ կետի 2.1-րդ ենթակետով սահմանվում է, որ սույն պայմանագրով իրականացվող գործունեության գործերը վարում է Գործընկեր 1-ը, հետևաբար «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի մասնակցության հայտը ներկայացվում է վերջինիս կողմից:

Երևանի քաղաքապետարանի և «Ղահրաման» ՍՊԸ-ի միջև 10.12.2021թ. կնքվել են թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-3» և «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-8» ծածկագրերով գնման պայմանագրեր:

Պայմանագրերի 8.15-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, ***Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Պատվիրատուի կողմից 03.02.2022թ. «Արկինա» ՍՊ և «Ղահրաման» ՍՊ ընկերությունների էլեկտրոնային փոստերին է ուղարկվել համաձայնագրերի նախագծերը և առաջարկվել վերջիններիս 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իրենց կողմից հաստատված համաձայնագրերը՝ պայմանագրերի ապահովումների և որակավորման ապահովումների հետ միասին:

«Արկինա» ՍՊԸ-ին և «Ղահրաման» ՍՊԸ-ին ուղղված պայմանագրերը միակողմանի լուծելու մասին 01.03.2022թ. թիվ 01/61-4704, 01/61-4705 և 01/61-4706 համապատասխան ծանուցումներով Պատվիրատուն մասնավորապես հայտնել է, որ 10.12.2021թ. կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-3», «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-8» և «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-6» ծածկագրերով գնման պայմանագրերի շրջանակներում Ընկերությունների կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել իրենց կողմից հաստատված համաձայնագրերի բնօրինակները՝ կից փաստաթղթերով, և պայմանագրերի և որակավորման ապահովումները: Ինչպես նաև Պատվիրատուն նշել է, որ հիմք ընդունելով

Պայմանագրերի 8.15 կետը՝ հրաժարվում է կնքված պայմանագրերից համարելով դրանք լուծված:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 01.03.2022թ. հրապարակվել են Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները:

Այսպիսով՝ Կարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանվում է, որ ***համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն*** :...

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝***

1) համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում՝ հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

2) ***Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:*** Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ ***պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:***

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը՝ դրանք համադրելով գործում առկա ապացույցների և վկայակոչված իրավակարգավորումների հետ, արձանագրում եմ, որ գնման ընթացակարգին համատեղ գործունեության կարգով մասնակցած «Արկինա» և «Մայ Վիլլիջ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը և «Ղահրաման» ՍՊԸ-ն թույլ են տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, քանի որ Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում վերջիններս Պատվիրատուին չեն

ներկայացրել իրենց կողմից կնքված համաձայնագրերը, ինչպես նաև պայմանագրերի և որակավորման ապահովումները, որոնք հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը***

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.03.2022թ. թիվ 26/26-1/4087-2022 գրությամբ «Արկինա» ՍՊ, «Մայ Վիլլիջ» ՍՊ և «Ղահրաման» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և վերջիններիս ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**